ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

• ՀՀ, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60)71-00-79, 71-00-78, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 241 «__13____»___02______2024 թ.

# Արձանագրություն N 241

## ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2024թ-ի փետրվարի 13-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 (երեսունվեց) անդամներից 31-ը:

1. 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում / զեկ.՝ գիտ. խորհրդի նախագահ Տիգրան Եփրեմյան/:
2. Տիգրան Եփրեմյանի **«ԱՄՆ պատմություն»** դասագրքի հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ պրոֆ. Ա. Մարգարով/:
3. Խոսրովադուխտ Ազատյանի **«Պառլամենտարիզմը ժամանակակից աշխարհում»** վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:
4. Դոցենտի կոչման համար դիմումի քննարկում և մրցույթի անցկացում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
5. Ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի կազմի հաստատում / զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:
6. Հայցորդների թեմաների և ղեկավարների հաստատում /զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:
7. Հայցորդների ատեստավորում /զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:

8. **«Ազգային անվտանգություն»** մագիստրատուրա հեռակա 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատում:
9. Պրոֆեսորի օգնականի թեկնածուների հաստատում /զեկ.՝ գիտքարտուղար Գ. Բալասանյան/:
10. Ընթացիկ հարցեր:

**Խորհուրդը որոշեց.**

1. 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ներկայացումն ընդունել ի գիտություն:

2. պ.գ.թ., դոցենտ Տիգրան Եփրեմյանի **«ԱՄՆ պատմություն»** վերտառությամբ դասագիրքը երաշխավորել հրատարակության:

3. ք.գ.թ., ասիստենտ Խոսրովադուխտ Ազատյանի **«Պառլամենտարիզմը ժամանակակից աշխարհում»** վերտառությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

4. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք.գ.թ. Փայլակ Ենգոյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել են 31-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Դոցենտի կոչման համար՝

**Փայլակ Ենգոյան –** 31 կողմ, 1 դեմ, անվավեր քվեաթերթիկ չկա:

գ/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար պ.գ.թ. Շիրակ Թորոսյանի անունը:

դ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի

հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել են 31-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Դոցենտի կոչման համար՝

**Շիրակ Թորոսյան –** 31 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

5. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Հերմինե Սամվելի Մխիթարյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Արցախյան հակամարտության բանակցային գործընթացի տրանսֆորմացիաները 2018-2024թթ», ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ. պրոֆեսոր **Ալեքսանդր Մարգարովին** :

6. **«Ազգային անվտանգություն»** մագիստրատուրա հեռակա 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և ղեկավարներին հաստատել:

7. Հաստատել ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նոր կազմը.

1. **Ռոման Գագիկի Կարապետյան** - /նախագահ, պ.գ.թ., դոցենտ /
2. **Կատերինա Վանիկի Ալթունյան** - /անդամ, ք.գ.թ., դոցենտ/
3. **Միրանուշ Սերոժի Մելիքյան** - /անդամ, ք.գ.թ., ասիստենտ/
4. **Մարտին Ռազմիկի Խուրշուդյան** - /անդամ, «Քաղաքագիտություն» կրթական ծրագիր, բակալավր 3-րդ կուրս/

8. Հայցորդներին ատեստավորել և երաշխավորել ուսուցման հաջորդ տարի տեղափոխվելու համար:

9. Պրոֆեսորի օգնականի թեկնածուների հայտերը հաստատել:

10. Ընթացիկ հարցերի շրջանակներում որոշեցին ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերություններ բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող **Գագիկ Եկմալյանին** ներկայացնել Ջոն Կիրակոսյանի անվան կրթաթոշակի, իսկ

քաղաքագիտություն բաժնի բակալավրի 4-րդ կուրսի ուսանող **Արմեն Նավասարդյանին**՝ Ռուբեն Միրոյանի անվան կրթաթոշակի:

*Գիտական խորհրդի նախագահ* *Տ. Եփրեմյան*

*Գիտական խորհրդի քարտուղար* *Գ. Բալասանյան*